ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Բարձ – Արշակի խոսքն այստեղ վերաբերում է պարսից Սասանյան տոհմի կողմից պարթև Արշակունիներին տապալելու և նրանց փոխարեն թագավորելու պատմական իրողությանը: Արտավանը Պարսկաստանի Արշակունի արքայատոհմի վերջին թագավորն էր, որ իշխել է 216 – 226 թթ.: Նրան սպանում է պարսիկ իշխաններից մեկը՝ Արտաշիր Սասանյանը, դառնում թագավոր և հիմք դնում Սասանյան արքայատոհմի տիրապետությանը: Շապուհ թագավորը Սասանյան տոհմի ժառանգորդներից էր, իսկ Արշակը՝ պարթև Արշակունիների մեկ ճյուղը կազմող հայոց Արշակունի արքայատոհմի ժառանգներից: Հայոց Արշակունիները, իրենց ազգակից պարթև Արշակունիներին գահընկեց անելու համար միշտ ոխ ու վրեժխնդրություն էին տածում Սասանյանների նկատմամբ: Արշակի այն արտահայտությունը, թե «Դուք ծառաներդ, մեր Արշակունիների՝ ձեր տերերի, բարձն (գահ) եք հափշտակել» ակնարկում է այն իրողությունը, որ Արտաշիր Սասանյանը պարթև Արշակունիներին հպատակ, նրանց ծառայության մեջ գտնվող իշխան է եղել: Իսկ հայ Արշակունիները, այդ թվում՝ նաև Արշակը, իրենց համարում էին Արշակունիների մեջ ավագագույնը, սերված պարթև Արշակ մեծի սերունդներից և իրենց իրավունք էին վերապահում խոսելու Սասանյանների կողմից հափշտակված Արշակունիների գահի մասին՝ իբրև տոհմային սեփականության: